

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԲ.
ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Գերմանիոյ հայոց Թեմի Առաջնորդ
Հոգ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Պէֆնեանի
հրաւերով 17-22 Սեպտ. 1992ին Գերմանիա
այցելեց Երուսաղէմի Հայոց Առաքելական
Աթոռոյ Պատրիարք Ամենապատիւ Տ.
Թորգոմ Արք. Մանուկեան:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը
նախքան Գերմանիա գալը մասնակցած էր
13-15 Սեպտ. 1992 Պոռուսիայի մէջ տեղի
ունեցած համագումարի մը, որ
կազմակերպուած էր Հռոմի Սենթ Էնիտիոյ
ֆրիստոնեայ համայնքի մը կողմէ եւ որուն
մասնակցեցան 12 տարբեր կրօններու
պետերն ու քարճարաստիճան ներկայացու-
ցիչները: «Եւրոպա, կրօնք եւ խաղա-
ղութիւն» ընդհանուր անունը կրող այս
համագումարին Հայց. Առաք. եկեղեցին
ներկայացուցեցաւ Կիլիկիոյ հայոց
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի,
Երուսաղէմի Հայոց Առաք. եկեղեցւոյ
Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք.
Մանուկեանի եւ Արեւմտ. Եւրոպայի
Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ.
Գիւտ Արք. Նազգաշեանի կողմէ: Իսկ մեր
եկեղեցւոյ երեք քարճարաստիճան
ներկայացուցիչներուն կ'ընկերանային
Գերմանիոյ հայոց Առաջնորդ Տ. Գարեգին
Մ. Վրդ. Պէֆնեան, Հոլանտայի հոգեւոր
հովիւ Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան,
Պէնիֆայի մէջ ուսանող եւ առժամայ
հոգեւոր հովիւ Տ. Շահան Արք. Սարգիսեան,
ինչպէս նաեւ Տ. Արշալիր Վրդ. Գաբունեան,
իբրեւ գաւազանակիր Կիլիկիոյ
Կաթողիկոսին:

Պէնիֆայի համագումարէն յետոյ
Երուսաղէմի Ամեն. Սրբազան Պատրիարք
Հայրը, ընկերակցութեամբ Առաջնորդ Հայր
Սուրբին, գերմանիոյ Թեմի երեք համայնք-

ներուն այցելութիւն մը տալով ծանօթացաւ
նորահաստատ Թեմի համայնքներու գոր-
ծունէութեան եւ իրենց տուաւ իր հայրական
յորդորները:

Պատրիարք Սրբազան Հօր առաջին
այցելութիւնը եղաւ Նիւրնպերկ քաղաքը
19 Սեպտ. 1992ին: Սրբազանը հոն
դիմաւորուեցաւ տեղւոյն հոգեւոր հովիւ
Հոգ. Տ. Կոմիտաս Վրդ. Յովնանեանի եւ
համայնքի ներկայացուցիչներուն կողմէ,
ինչպէս նաեւ նահանգի բողոքական
եկեղեցւոյ Տէֆանը Տոքթ. Յովհաննէս
Ֆրիտրիխի կողմէ: Այս վերջինը վեց
տարիներ պաշտօնավարած էր Երուսաղէմի
Լիւտերական համայնքին մէջ եւ մօտէն
ծանօթ էր Սրբազան Պատրիարք Հօր:
Սրբազանին համար անակնկալ մը եղաւ
Նիւրնպերկի մէջ դարձեալ իրեն հանդիպիլ,
որուն հետ մտերմիկ խօսակցութիւն մը
ունեցաւ անցեալէն: Տօքթ. Ֆրիտրիխ լսելով
Պատրիարքի այցելութիւնը յատկապէս եկած
էր իրեն հանդիպելու եւ տեղւոյն հոգեւոր
հովիւին հետ մասնակցեցաւ Ս.
Պատարագին: Տէֆանը Ս. Պատարագ
մատուցուած եկեղեցին սիրով տրամադրած
է տեղւոյն Հայ համայնքի հերթական
արարողութիւններուն համար, ինչպէս նաեւ
ժողովուրդին մէկտեղումը դիւրացնելու
նպատակով տրամադրած է իրենց համայնքի
տունը յարակից սրահներով: Նոյն օրը
Միւնիխի հայ համայնքի երգչախումբին
ալ մասնակցութեամբ Սրբազան Հօր
մատուցած Ս. Պատարագին ներկայ եղան
աւելի քան երկու հարիւր հայեր: Իսկ
յաւարտ Ս. Պատարագին Պատրիարք Հօր
ի պատիւ տրուած ճաշին ժողովուրդը
ի պատիւ տրուած ճաշին ժողովուրդը
նորախութեամբ լսեց Սրբազան Հօր խօսքը:
Ամեն. Սրբազան Հայրը եկեղեցւոյ մէջ իր

փարոզով ժողովուրդին բացատրեց եկեղեցի բառին իմաստը, եւ անդրադարձաւ նորահաստատ թեմի կարգ ու կանոններուն եւ առաջադրած նպատակներուն: Յորդորեց ներկաները իսկական եկեղեցի ըլլալու՝ աղօթքով ու աստուածապաշտութեամբ, հրաւիրեց գիրքնէ Հայց. եկեղեցւոյ կարգ ու կանոններուն, ինչպէս նաեւ եկեղեցւոյ ասանդութիւններուն հաւատարիմ մնալ: Իսկ սրահին մէջ, տեղւոյն հոգեւոր հովիւին եւ Առաջնորդ Հայր Սուրբին բարի գալուստի խօսքերէն եւ Սրբազան հօր կենսագրական հակիրճ տեղեկութիւններէն յետոյ, Ամեն. Սրբազան Պատրիարքը պատմական տեղեկութիւններ տուաւ Հայոց Նրուսաղէմի վանքին վերաբերեալ:

Պատրիարք Սրբազանին երկրորդ այցելութիւնը եղաւ Նոյվիտ ֆաղափի համայնքին՝ 20 Սեպտ. 1992ին: Այստեղ եւս Սրբազանը դիմաւորուեցաւ համայնքի ներկայացուցիչներուն կողմէ, իրենց ատենապետ՝ Տիար Մինաս Պոյանեանի գլխաւորութեամբ. եւ առաջնորդուեցաւ սրահ մը, ուր բարձրաստիճան հիւրին ի պատիւ ճաշ պատրաստուած էր: Պատրիարք Սրբազան լսելով թէ, այս համայնքին մէջ նորակազմ երգչախումբ մը կայ Մերութան Սրկ. Սէտէֆանեանի ղեկավարութեամբ, փափաքեցաւ երգչախումբին մասնակցութեամբ, սրահին մէջ փոքր արարողութիւն մը կատարել: Սրահին մէջ ներկայ էր նաեւ հիւսիսային Գերմանիոյ հոգեւոր հովիւ Տ. Յակոբ Ա. Քինյ. Կէօֆեան, որ եկած էր երէցկոնջ հետ իր յարգանքը մատուցանելու Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր:

Ճաշի ընթացքին, Առաջնորդ Հայր Սուրբի ողջոյնի խօսքէն յետոյ, Պատրիարքը ներկաներուն խօսեցաւ եւ ֆաջալերեց գիրքնէ հաստատ մնալ իրենց հաւատքին մէջ, աշխոյժ կերպով մասնակցիլ համայնքային գործունէութեան եւ այսպէսով անասան պահել իրենց

եկեղեցին: Գնահատեց նորակազմ երգչախումբի անդամները, որոնք առանց հայերէն գիտնալու կ'երգեն եկեղեցւոյ շարականները: Այստեղ հարց ու պատասխանի ձեւով զարգացող խօսակցութեան մը ընթացքին, ներկաները լուսարանուեցան հայ եկեղեցին եւ ժողովուրդը յուզող կարգ մը հարցերուն առընչութեամբ:

Հոգ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Պէֆեսանի ընկերակցութեամբ Պատրիարք Սրբազան նոյն գիշերը վերադարձաւ Քէօլնի Առաջնորդարանը եւ յաջորդ օրը՝ 21 Սեպտ. 1992ին երեկոյեան հանդիպեցաւ այս ֆաղափի եկեղեցական համայնքի ներկայացուցիչներուն, որոնք Սրբազան Հօր ի պատիւ ճաշ մը տուին եկեղեցական համայնքի սրահին մէջ:

Քէօլնի համայնքի վարչութեան փոխ ատենապետ Տիար Մանուկ Անէմեանի եւ Առաջնորդ Հայր Սուրբի բարի գալուստի ու ծանօթացման խօսքերէն ետք Սրբազան Պատրիարք Հայրը ներկաներուն ընդարձակ կերպով բացատրութիւններ տուաւ թեմական կազմակերպութեան, եկեղեցւոյ եւ համայնքային աշխատանքներու անհրաժեշտութեան մասին: Ապա խօսեցաւ Նրուսաղէմի Պատրիարքութեան ներկայ կացութեան եւ ապագայ ծրագիրներու մասին, հրաւիրեց ներկաները ուխտի երթալ Նրուսաղէմ, որպէս զի անոնք սրբատեղիներուն ծանօթանալով վերանորոգեն իրենց հաւատքը եւ տեսնեն հայոց դարաւոր մշակոյթի այս կեդրոնը:

Այստեղ անգամ մը եւս յիշենք, որ Գերմանիոյ հայ գաղութը բաղկացնող հայերու մեծամասնութիւնը Թուրքիոյ զանազան գաւառներէն եկած ըլլալով դժբախտաբար կանոնաւոր կերպով հայերէն չեն խօսիր: Հետեւաբար Սրբազան Պատրիարք Հօր իւրաքանչիւր ֆաղափին մէջ արտասանած խօսքը քարգմանուեցաւ Առաջնորդ Հայր Սուրբին կողմէ Թրքերէնի,

ինչ որ գոհ ձգեց ներկաները, գանձման լրիւ կերպով հաղորդակից դարձնելով Սրբազան Հօր յայտնած գաղափարներուն: Այժմ այս ֆաղափներուն մէջ շարաքօրեայ հայերէն դասընթացներ հաստատուած են, գէթ նոր սերունդին հայեցի դաստիարակութիւն տալու, եւ այս աշխատանքին կ'օժանդակեն գերմանական եկեղեցիներն ու Ամերիկայի Գարակեօզեան Հիմնադրամի հաստատութիւնը: Համայնքներէն զատ Սրբազան Պատրիարքը հանդիպում ունեցաւ հայ ուսմանց հիմնադրամի հիմնադիրներէն Տիար Յուլակ Տէր Յարութիւնեանի եւ Տոբ. Միհրան Տապաղեանի հետ: Այս հանդիպման ընթացքին Սրբազանը ծանօթացաւ հիմնարկի ծրագիրներուն: Անոնցմէ առաջինն է մեծ եղեռնէն վերապրողներու կենսագրութիւններուն գիտական ուսումնասիրութիւնը, որ պէտք է սատարէ հաւաքական յուշի ստեղծման: Հիմնարկի ուրիշ մեծ ծրագիրն է բոլոր գերմանական արխիւներուն մէջ գտնուող հայկական հարցի վերաբերեալ նիւթերու հաւաքումը, Պէոլիմի Համաժողովէն մինչեւ Լոզանի Դաշնագիրը: Այս նիւթերը ցրուած են Գերման 30 տարբեր ֆաղափներու արխիւ-

ներուն մէջ: Իսկ վերջին կարեւորագոյն ծրագիրն է Հայաստանի մէջ, Գերմանիոյ Ներքին Գործոց Նախարարութեան օգնութեամբ, հիմնել ներկայ Հայաստանի պետական կառոյցը բարելաւելու համար բարձրագոյն ուսումնարան մը, պատրաստելու համար պետական վարչական անձնակազմը, ֆառեր: Վերջին այս ծրագրի նախագիծը արդէն իսկ մշակուած է եւ գերմանական կառավարութիւնը տուած է իր համաձայնութիւնը: Առաջնորդ Գարեգին Հայր Սուրբը այս ծրագրին թղթածրարը անձամբ պիտի փոխանցէ Անկախ Հայաստանի Հանրապետութեան մեծարգոյ նախագահ Տիար Լեւոն Տէր Պետրոսեանին:

Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Սրբազան Պատրիարքը 23 Սեպտ. 1992ին Փարիզի ճամբով եւ ընկերակցութեամբ Հոգշ. Հայր Սուրբին Ս. Էջմիածին կը մեկնի, ներկայ գտնուելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Հայոց Հայրապետի գահակալութեան տարեդարձի հանդիսութիւններուն եւ այս առթիւ կատարուելիք եպիսկոպոսական օծման արարողութիւններուն:

ԳԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
Գերմանիոյ Թեմի

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼԻՔԻ

Այսու, կը հաղորդենք թէ Ծայրագոյն Արեւելի Հայրապետական Պատուիրակ, Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօզեան, թեմական այցելութիւն տուաւ Հոնկ Գոնկի եւ Պանկզոգի հայերուն:

Նոյ. 16-19, 1992ին Սրբազան Հայրը այցելեց Հոնկ Գոնկ, ուր, Ս. Պատարագի մատուցմամբ ու բանին կենաց ֆարոգութեամբ, միխթարեց Հոնկ Գոնկի փոքրաթիւ հայերը - 12 հոգի-:

Պարզեց Հայաստանի ներկայ կացու-

թիւնը: Խումբ մը գիտակից հայերու նուիրատուութեամբ 30 (երեսուն հազար) Ամերիկեան տոլար գոյացաւ, Հայաստանի օգնութեան համար:

Նոյ. 20-27, 1992ին, Սրբազան Հայրը այցելեց Պանկզոգ. հոս եւս Ս. Պատարագի մատուցմամբ ու բանին կենաց ֆարոգութեամբ, միխթարեց Պանկզոգի հայերն ալ հետեւելով Հոնկ Գոնկի իրենց արեւակիցներուն գեղեցիկ օրինակին, 35 (երեսուն հինգ) հազար Ամերիկեան Տոլար